

ՀԱՅԱՐԵՆԵՐ

891.99

4289

u-15

Kendall Jr.


Zurich 47 h.

30/11

9/11


868







Խ. ԱՐՈՎՅԱՆ



89152
K-15
1937-44.07 է 1961 թ.


№7 ԱԲՈՎՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՊԵՏ

ԽՍՀՄԱՆՈՒՐ ԱՐԽՎՅԱՆ

4289
I
A 5062
Հ ԱԶԱՐՓԵՇԵՆ



ՀԱՅՊԵՏՏՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1941





Անգամ «Վերք Հայաստանի»-ի մեջ, հայրենասերի այդ մեծ ողբի մեջ, Աբովյանը դրսևորում է իր շատ սիրելի հատկություններից մինը՝ հումորը: Բարիկենդանի նկարագրությունը լի է կոմիկ պատկերներով. տանուտի-րոջ, գզրի, տեսերի և մյուսների հետ պատահած դեպքերը, կամ երեվանի հրապարակը իր տիպերով: Աբովյանը բացի առակներից, որ պահանջում են որոշ հումոր, ունի նաև զուտ հումորիսական գրվածքներ՝ իբրև ավանդություն, դեպք, որոնց մեջ նա ցուցաբերում է իր անհասական հումորիսի հատկություններից բացի՝ նաև ժողովրդական երգիծանքի ձևերն ու ոնր: Առուդները, որոնց նա աս էր լսել և հետևում, հնում հաճախ էին հանդես գալիս մի որևէ պատահած դեպքերի երգիծական ոտանավորով: Երգիծանքը մեծ ժողովրդականություն ուներ: «Հագարիտեհն» Աբովյանի հումորիսական գրվածքների լավագույններից մեկն է: Խորիմաս է այն և բովանդակալից՝ չնայած իր քերև, ուրախ ձևին: Ճիշտ է նաև, որ դա բողոքում է բարեհոգի տը-

պատրուրդուն: Բայց նրա խորհում քանկած է Անդր-
 կովկասի իրականության մի բավականին տխուր պատ-
 կերը: Ֆաբուլայի կոմիզմը հիմնված է երկուսեք ան-
 նանաչության և բյուրիմացության վրա: «Իմաստուն»
 ռուս, ասենք, մի չի նովնիկ քերես մայրաքաղաքի պա-
 րահանդեսներում, ակումբներում, բիրժաներում
 պերնանի, վայելի և հարսության հետևից վագոդ մի
 ռուս մարդ, բավական նվաստացուցիչ կարծիք ունի
 Անդրկովկասի «սեղացիների» (тыземцы) բարբի, կեն-
 ցադի և բարոյական հասկությունների մասին: Նա
 արհամարհում է կովկասի «սեղացուն», ծիծաղում, խոր-
 ժում է նրանից: Համարում է որ նրանք, «զեղացիները»
 հայ, վրացի և այլերը անասուն են, ինքնասիրությու-
 նից զուրկ, հայհոյանքին պոսասխանում են փաղա-
 փառնով, խելք չունեն — փոխանակ կապիտալ դիզելու,
 բուրժուական բարեկեցության, «չինի» ձգտելու՝ հյուրա-
 սիրում են և իրենց բարիքը վասնում: Հյուրասիրու-
 րյունը նա համարում է կամ հիմարություն կամ ստոր
 ստրկամտություն կամ ժախխնդրություն:

Աբովյանի այս գրվածքի պատմական-սոցիալական
 հիմքը 19-րդ դարու առաջին կեսի այն իրականու-
 րյունն էր, երբ Անդրկովկասի նվաճումը նոր էր իրա-
 դեմ կանգնեցնում «սեղացիներին» և «նվաճողներին»: Դա
 այն մոմենտն էր, երբ երկու կողմերից էլ իրա-
 ներկայանում էին ոչ երկու ժողովուրդների ներկայա-
 ցուցիչներ՝ բուն առևտրապատրուրդուն ու մտավորա-
 կանությունը, այլ մի կողմից չինովնիկը, մյուս կողմից

չարչին, առևտրականը: ժողովուրդները դեռ հեռու էին
 իրարից: Ռուս զինվորն ու սեղացի գյուղացին, արհես-
 տավորը քերևս իրար հանդիպում էին, բայց նրանց
 կարծիքները սեղ չէր հասնի: Բարոյապետ ոչ բարձր
 Տիպերը այսպիսով իրար հանդիպելով սեղծում էին
 այն արհամարհանքն ու հանախ ասելությունը, որի
 շուրջին զգում ես «Հազարփեռայի», «Իմասունի»
 վերաբերմունքի մեջ դեպի «սեղացիները»: Ճիշտ է, ավալ
 դեպքում այդ սեղացիները չարչիներ չեն և ոչ էլ ավան-
 սյուրիսներ, որոնց պատահում էին Ռուսաստանի
 ֆաղաֆներում, սրանք պարզասիրտ, բարի, ուրախ մար-
 դիկ էին, ևե՛ծ էին անում իրենց կենցաղի հասկացո-
 ղություն և բարոյական «կանոնների» համաձայն: Բայց
 ռուս եկվորն ընկնելով նրանց մեջ՝ ծիծաղում և ար-
 համարհում է նրանց: «Դեպքը» պատահում է անսպա-
 սելի հետևանքով: Պատիվը դառնում է պատիժ: Թեև
 բնական պատիժ: Եկվորը չգիտե սեղական գինու ուժը,
 սեղացի չգիտեն եկվորի դիմացկունությունը: Եվ բյու-
 ռիմացությունը պայքում է մի ծիծաղելի տեսարանով:
 Եկվորն սկսում է ջարդել, կոտրատել ամեն բան, ինքն
 էլ ընկնում է գինու, կերակուրների վրա, քրջվում,
 խայթառակվում: Սկանդալը վերջանում է բախտավոր
 փոխադարձ հասկացողությամբ: Եկվորը հաճավում է
 «սեղացիների» հետ և փառաբանում է իր առաջվա
 արհամարհված «Հազարփեռան»:

«Հազարփեռան» ունի նաև որոշ սիմվոլիկ իմաստ:
 Դա Անդրկովկասի ժողովուրդների վիրավորանքն է հան-

դեպ նվաճողների արհամարհանքին: «Հագարփեւան»
երկու այդ կողմերի իրերահասկացողության փորձա-
փառն է:

Աբովյանն այս գրվածքում հանդես է բերել փայլուն
սրամտությամբ, կենդանի պատկերավորումով, կոմիա-
կան ցեսարանների հոյակապ նկարագրությամբ: Դա մի
ժողովրդական, հոմերական ծիծաղ է, լայն ու արձագան-
գող, որի մեջ Աբովյանը հանդես է բերում իր մեծ ուժի
ամբողջ զաղսնիքը — ժողովրդայնությունը: Եվ չի բե-
այդպիսին՝ այս հումորը, երգիծանքը առողջ է, սուր,
խայթող, բայց և բարեսիրտ ու դաստիարակիչ:

Գրվածքը լույս է տեսել Թբիլիսիում 1912 թվին:

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ.

ՀԱՅԱՐՓԵՇԵՆ

Մեկ իմաստուն մարդ մեր հաղարիւնչի
Անունը լսելով, ու մեր ոմրի,
Մեր կռաքիթ լուլի, ու գինու պողի,
Մեր սե տկճորի, ու կպրած տկի,—
Ձահլեն գնում էր, սիրտը խառնվում:
Քթին հուփ տալիս, աչքերը խփում:
Մեր խալխի գլխին թուք ու մուր ածում:
Հենց իր տեղումն էլ ոտը քարին խփում,
Թե վրաստանցիք մարդի հեսարում
Ձի պետք է ըլին՝ որ չեն խնայում,
Աստուծո սուրբ բաժակն էսպիս մուռտառում
Իրանց բերանն էլ հետն ապականում:
Նոյի շարբաթը՝ գոմշի ու եզան
Կամ իծի, ֆորթի լպրդած կաշում

Մեծում ու պահում, ու նրանց բերանն
է՛նպես՝ դադլով հուփ տալիս, կապում,
Որ ազնիվ գինու քաղցր հոտն ու համը
Թմբու, տկճորի կարած փխ հոտումն
Յաղու ա դառնում, ու հոգին, ջանը
Իրան փորումը խեղդում, սպանում:
Ժամի բաժակն էլ հենց հարամ անում:
Տերտերի բերանն ու իրանց փորը
Կարի կարասի պես սեպնում:

Մեկ սուպի գդալ հենց մեջ են քցել,
Անունն էլ մեծ մեծ՝ հաղար փեշա զրել,
Լավ չի նրանով կարես խփշտել:
Որ յախա չունի, փեշն ո՛վ ա տվել,
Որ է՛սպես են նրան կնքել, մկրտել:
Դեռ զլուխը բերանդ չհասած, դրած՝
Կոթն են դեմ անում, գինով լցրած:
Թումբին, տիկն հո՛ւ էնպես իմանաս,
Մեկի միջումն՝ թե որ ռառտ գաս,
Անգլուխ հայվան ըլի դես ու դեն ընկնում
Մարդի ոտ ու գլուխ ռուսվա անում:
Չէ՛՝ էսպես երկրում շունը չի կենալ:
Էնպես շան հաջաթն իրան բերնին տալ:
Ափսոս էն հողը, ափսոս էն վազը,

Որ էսպես հիմար մարքերանց ճանկը
Գինն էլ ա կորցրել, իրան պատիֆն էլ:
Էնչի՞ չենք էնդեղ մենք ծնունդ առել,
Որ խտակ բռնկում, շուշե բուդիլկում
Աստուծո տված բարին պահենք ամանում:

Որգիանց որդեղ սատանի քամին
Պատեց ու մեր խեղճ շնորքի կարասին
Աչքը թող լցրեց, քարեքար տալով՝
Գլուխը ջարդելով, ոտը կոտրելով՝
Երկինքը հանեց ու դետնին խփեց,
Կավկասի սարի էս կողմը շարտեց:
Աչքը տրորելով՝ հենց որ բաց արավ,
Գլխին, ոտին վեր հատելով տեսավ,
Որ մեկ քանի մի ջահել վրաստանցի
Իրար մոտ նստած մեկ ծառի տակի,
Բաղերը քաղում, խաղողը կտրում,
Հնձանը բերում, առաքաստն ածում,
Ոտները վեր քաշած կոխում, կխչորում.
Հետն ուտում խաղողը, կեսը դեն քցում.
Պանիր, խորոված՝ հենց տաք տաք ուտում.
Հազարփեշեն բռնած՝ իրար դեմ անում.
Գուլեն կլկլացնում, ումբին դարդակում,
Ու իրանց քեֆին խաղող կամ խնձոր

Իրար գլխի խփում, հետը խաղ առում:
Վեր կենում ցոփ ցոփ՝ պար գալիս, նստում.
Իրար ճիտ անում, էլ եղ հաց ուտում,
Երեւները վարդի պէս կարմրացրած
Թունգերով գինին իրար գլխով խփում,
Կամ անց կենողին կանչում, նստացնում,
Ուտացնում, խմացնում, էլ ճամփու քցում:
Խեղճները տեղը, ուշները գլխին,
Մեկին էլա մեկ ֆլաս չէ՛ր ըլում:

«Տեր իմ և աստված՝ էս ի՞նչ տեղ ընկա»,
Գեջղանգեջ գլուխը բարձրացրեց նա,
«Ո՞ւր մեր բալն, կոնցիբան, մեր էն թեատրը.
Մեր քլուպն, մեր բիրժը, ու մեր տրաքտիրը,
Ո՞ւր մեր մուղիկեն, մեր քաղցր սկրիպկեն,
Մեր դամբոն ու մեր կավալերները,
Մեր կանֆետն, մեր տանցն, ռոմի թասերը,
Շամպանսկու ռումկեն, ու բուդիլկները,
Որ ուտես, խմես՝ կոմպլիմենտ տալով
Դամի ձեռիցը բռնած՝ պար գալով՝
Աթոռի վրա, գիվանի միջումն
Նստիս քո դամի կշտին. կամ սրտումն
Քո սերն ու շնորքը, սրտիդ հասրաթը
Թափես, էլ եղ ձեռն առնիս քո ձեռը,

Էլ եղ պտտիս, մինչև գլուխդ ուռչի,
 Ու շմամբ ընկնիս դամիդ առաջի,
 Նա էլ աղլխով խփի էրեսիդ,
 Կամ իր սուրբ ձեռովն ջուր շաղ տա դռնիդ»:
 «Էս ի՞նչ տեղ ընկա, էս ի՞նչ ջհանդամ.
 Որ կողմն էլ ընկնիմ, էլ եղ սախտ մնամ:
 Ո՛չ լեզու գիտեն, ո՛չ ինձ հասկանան.
 Սիրտս պատռում ա, ո՞ւմ ասեմ իմ դարդն:
 Հայ ասես, վրացի գլխիս մոտ էլած,
 Քեֆըները բոք, գլխըներն լցրած.
 Բռն ժուր եմ ասում»), «քեֆ արած» լսում.
 Գուտն տաղ^{բ)} կանչում, «տո խմի» լսում:
 Զգրաստի գոռալով էս բերանս ձոթում,
 Ուռն են կանչում, գինին փորս ածում.
 Բեսթի եմ ասում, ես «դոսթ» եմ լսում.
 Պոռկլյատիյ գոռում, «ալլահ վերդի» լսում.
 Կանալյա ասում, «յաղչի օ՛լ» լսում:
 Մազերս եմ ուզում պոկեմ, պոճոկեմ.
 Դուել եմ ուզում կանչեմ, սպանեմ.
 Ոտս եմ բարձրացնում, քացի տամ ջարդեմ,
 Մեկ մեծ պարկ ուշուենց, ու հազար անեծք

ա) բ) Գաղղ. և գերմ. կնշանակե բարի օր:

Նրանց գլխին ածեմ, ու դուս դամ փախչեմ,
 Շատ ուշունց տալով բերանս հոտեցավ,
 Լեզվիս ու փորիս բոլոր նյութն հատավ.
 Էս տավարները, հաստագլխները
 Բերնիս չեն նայում, իմ ասածները
 Անկաջվեր անում, թե հասկանում էլ,
 Էլի թեկոց քաշում, նստացնում.
 Հաղարփեշեն ու կուլեն դեմ անում:
 Հենց գիտես՝ սրանք մարդի որդի չեն,
 Որ էսքան խոսքին տանին, համբերեն:
 Սատանին ասես, քեզ դժոխքը կտանի,
 Դուռը կկանչի, արինդ կթափի:
 Սրանց կոպիտ գլխումն դեռ մեր մարիֆաթն
 Հեշտեղ չի արել, կամ քթին դիպել.
 Որ դատած ապրանքդ, մալդ ու դոլվաթդ,
 Պահես սեօրին, թե ջուր ուղեն էլ,
 Ընչանք փողը չառնիս, նրան տուն չթողաս.
 Դուռնդ ընկած ըլին, քացով խփես, գնաս:
 Էս ինչ ախմախ են, որ իրանց հացը
 Ում որ տեսնում են, ածում առաջը:
 Փող պտի շինած ու ծոցը դրած.
 Լավ հաքած, մաշած ու կառնթ լծած,
 Բալ տալ, բալ գնալ, իր փառքը ցույց տալ,

Մոտովդ անցնելիս, երեսդ շուռ տված.
 Ինչ ունիս, գլխիդ, ոտիդ խարջ արած.
 Լավ տեղ ու լավ չին, լավ նշան ճարած.
 Ամենի աչքն էլ վրեդ մայիլ թողած,
 Բուրվարն մտնելիս՝ հազար աչքի մեջ
 Կամ կրակ վառած, կամ սուր, փուշ ցցած:
 «Սրանք հո մարդիկ չեն, իրանց շապիկն էլ,
 Որ ուզես, կտան, էնքան խղճացել:
 Անտես, անճանաչ տուն էլ որ մտնիս,
 Սուփրի գլխին դու կնստիս, կբազմիս:
 Մեկ աչքդ աչքին, երեսդ երեսին
 Առնելիս՝ կուզեն՝ տան իրանց հոգին:
 Մեկին մեկ դարդակ դուն բարով տալիս,
 Ուզում ա ջանը հանի, քեզ բաշխի:
 Չէ՛. սրանց մտքումն մեկ ֆիքր որ չլի,
 Քեզանից մեկ բան, մեկ ումուղ չլի,
 Մեկ խնդիր, արդա թե որ չունենան,
 Էս տեսակ պատիվ քեզ ի՞նչպես կտան:
 Ասածն էլ չանես, խնդիրը չկատարես,
 Էլի ոսկիքը, գլխով շաքարներ
 Սուսուկով չայը, չալ չալ մանեթներ
 Էլի ջերդածես, նրանց հոգին հանես,
 Թե խոսք էլ ասեն, քամակդ դեմ անես,

Ասիացի մարդն զակոն ի՞նչ գիտի,
 Որ քեզ հետ խոսա կամ համարձակվի:
 Գլխին տո՛ւր, զրադին կանգնի՛ր, քեֆ արա՛,
 Զերդ լցրո՛ւ, քո երկիր դնա՛.
 Ով ա հարցնում, կամ գլուխդ կտրում.
 Անլեզու հայկանն տուն թողում, պահում:
 Շատ էլ որ անեն, մեկ պողսուդ կտան,
 Պրծար, գլուխդ ա՛ռ, ու դնա՛ քո բան:
 «Որ դռնով անցնիս, քեզ տուն են կանչում»,
 Հարսանիք, զոնադ առանց քեզ չանում:
 Սաղ ու սաղանդար կանչում, մխիթարում:
 Սրանք ի՞նչ գիտեն զակոն, էտիքեթն,
 Գտակները գլխին, բերնին չիրխի վետն
 Զեռդ բռնում են, վերելը նստացնում,
 Զազղրավիա, ուռա՛ հենց կանչում, գոռում:
 Ալլահվերդի, յա յախշի՛ օլ բղավում:
 Տո ձեր ալլահն էլ, վերդի մերդին էլ,
 Զեր զղրավին էլ, ուռա՛ մուռեն էլ
 Զեր գլխովը դիպչի, ձեր աչքը հանի:
 Ախր տրաքեցի, էնքան լազեցի,
 Ախր ճաքեցի, էնքան լափեցի:
 Գլուխըս վրես էլ դուդ չի՛ կանդնում.
 Աչքերս սևանում, խելքս ցնորվում:

Տո մեռա, թողեք՝ այ դուք մաշենիկ.
 Ինձ հո չեք սպանիլ՝ ախ դուք յարեղնիկ.
 Ձեր տունն էլ քանդվի, ումբինն էլ տրաքի.
 Ձեր հաղարվեշեն, կուլենն ո՛չ ըլի:
 Իմը ինձ հասավ, թողեք՝ մեկ դուս գնամ.
 Մի քիչ շունչ առնիմ, իմ գլուխը լամ:
 Խեղճ վրաստանցիք մնացին սառած,
 Իրանց զոնադի ահվալը տեսած.
 Փորը մեկ կողմից, բերանը բաց էլած.
 Ուզեցան քուն դնեն, նրա մոտը նստած.
 Կամ իր ֆաթերը մթնով հասցնեն,
 Որ այլք չտեսնին, վրեն չծիծաղեն.
 Նա էլ չամաչի, իր երկիրը չփախչի,
 Կամ իրանց մեկ չար խաթի մեջ չքցի:
 Տեղից վեր թռավ գիծ կովի նման,
 Զարդեց շարքեասեն, կուլենն ու ամանն.
 Ուզեցավ մեկ քար, կամ մեկ փեղ առնի,
 Նրանց գլխին քցի, նրանց ջանը հանի.
 Ինքը չորս ոտով գլխի վրա չոք, չոք.
 Մաղալաղ տվեց ու ցոփ, ցոփ, լոք, լոք,
 Շիրի կարասը ընկավ նա կուփ, կուփ,
 Բերանն էր բանում, աչքն էր մնում խուփ,
 Աչքերն էր ճմռում, քցում բերնի թուփ:

Յինին հարամլեց, բայց մեր խեղճ հայերն
 Գինուց ձեռք վերցրին, զոնադի շորերն
 Ուզում էին՝ որ հանեն, չորացնեն,
 Բարձ, յորդան, զոշակ քցեն, պառկացնեն:
 Մեր փիլիսոփեն, մարիֆաթի պարկն
 Կուռը վեր քաշեց՝ որ նրանց ոտի տակն
 Մնի, սպանի, իր ջիգրը հանի,
 Մեկ էլ որ ջանին զոռ տվեց, բիրադի
 Զուխտ ոտով ընկավ սուրբ ռմբու զլխին:
 Ռումբին կատաղեց, ուխը բաց արեց,
 Մեր ուսյալ գծին խախտը քաշեց,
 Աչք, ունքեր, երես դեղ դրեց, կպրեց:
 Մեկ էլ որ ուզեց, բերանը բաց անի,
 Որ իր շկուլի աղոթքն եղ ասի,
 Ռումբին շկուլի դեռ ձեն չլսած,
 Ո՛չ վարպետ տեսած, մարիֆաթ չառած,
 Որ իմանա՝ թե կոմպլիմենտն ի՞նչ ա,
 Կամ էտիքեթը ի՞նչ փառած կոմշի ա,
 Է՛նպես մեկ գոռաց, բողազը ճոթռեց,
 Ու ջուխտ ոտով նրան էնպես քացի տվեց:
 Որ հենց ուզում էր գլուխը հանի,
 Քամակի վրա էլ եղ շուռ եկավ,
 Մաղալաղ տվեց, գունդ ու կծիկ էլավ,

Ու փռալով, աղոթք ասելով,
Հային օրհնելով, վրացուն գովելով,
Ընկավ օջաղի, քյաբարի վրա,
Շուռ տվեց, ջարդեց պղինձ ու թավա,
Կրակն մեկ կողմից, շամփուրն մյուս դհից,
Բարկացած, տումի պղնձի ղրաղից
Բռնեցին գոռալով, իրանց գլուխը լալով,
Էսպես մեր խղճի կարթացած բերանն,
Ու ղշի լեզուն, սիպտակ երեսը,
Նազուք ձեռները, բարակ ծնկները
Բերան քցեցին, ատամի տակին
Հուփ տվին ծամեցին, միսը թոցրին,
Որ կատու դառած՝ ձեռները քցեց՝
Որ իրան հանեն, աղաչանք արեց:

Դուս եկավ՝ թե չէ՝ էլ ասլան դառավ.
Քարերով ընկավ, քոլերով ընկավ.
Որ նրանց կերածն քթներիցն հանի,
Նրանց բոլոր տանի, պոլիցեն ածի:
Սատանի աչքը պետք է քոռանար,
Որ էսպես վախտին բանի մեջ չգար:
Քոռաղաղինա՝ մեկ պղնձով նաֆթ
Բերել էին՝ որ տկերը կալնին,
Որ գինին չտանին:

Խելոք գինեգիժն հենց ֆոսանդ ճարեց,
 Մեկ էլ իր ձեռը, որ չի բարձրացրեց,
 Ճզղաց, թրպրտաց, նաֆթի պղինձն ընկա՛վ,
 Դու լավ կիմանաս, ինչ գլխին եկա՛վ:
 Նաֆթը դադած էր ու կրակի վրա.
 Վա՛յ նրա օրին, դուշմանիդ չգա:
 Գլխի վրա էր նա մեջը ընկել.
 Ոտները դարիդուռն ցցվել, մնացել:
 Ձենը կտրվել, շունչը պապանձվել:
 Էլի մեր նաչար բարի վրաստանցիք
 Ոտիցը բռնեցին, նրան դուռն քաշեցին,
 Զուրը քցեցին, երեսը լվացին,
 Գնացին դեղ բերեն, կամ հեքիմ կանչեն,
 Էլի իմաստունն՝ որ ասիալթասիալ
 Հենց մեկ շունչ քաշեց ու քիչ գինջացավ,
 Թաքրար քար, փետի նա վրա պրծավ:
 Էրված, խորովված ձեռներովն սկսեց,
 Որ մեր անաստված նաֆթի պղինձը
 Նրանց գլխին քցի, նրանց վոթոթի:
 Սատանին նալաթ՝ պղինձն իր գլխին
 Շուռ եկավ, էրեց նրան, զարկեց դեռնին:
 Ձեռը չորս կողմը քոռքոռ ածելիս,
 Քարերը պոկելիս, դռնին խփելիս՝

Որդիանց որդեղ մեկ հազարփեշա
 Նրա ձեռն ընկավ քոռաղաղինա:
 Հենց իմացավ՝ թե էս դաբանչա ա,
 Դռչին որ չդրեց՝ աստված կանչելով,
 Իսկույն մեկ քանի հոգի ձեն տալով.
 Մեկը սապոժնիկ, մյուսը կալրասնիկ,
 Մյուսը պորտնոյ, մեկը տրաքտիրշչիկ՝
 Քոթուկ-ոտներով, ջվալ բերանով,
 Տեփուր-երեսով, ճարխալ-թշերով,
 Զուռնա-քթերով, բհիր-ձեռներով,
 Տրուբկա քաշելով ու բոշկա-փորով,
 Դորի ու չափար, դռները քանդելով,
 Վրա թափեցին, ռխները ցրվելով,
 Դինու, արաղի, կալրի փիս հոտով
 Ուղում էին՝ որ հենց սոված փորով
 Մեր խեղճ վրաստանցոցն բիրադի ուտեն,
 Իրանց հունարը նրանց վրա փորձեն,
 Ամա մեր խալխի մուշտու հունարը
 Դեռ չէին տեսել, որ իրանց ձեռը
 Թոխմախ — գլխներով բալի տակ չքցեն:
 Հենց պղղութիւնի լցրին ուշուեցով,
 Դուռակ, ու շելմա՝ էկան ձեռն տալով,
 Մեր հայի մուշտին, վրացու քացին

Էնպես թունդ դիպավ նրանց գլխին, փորին,
 Որ ամեն մեկը հազար տեղ չոքեց
 Թխկաց, զրխկաց, հազաց սւ պառկեց.
 Մեկ կողմը շապկեն, մյուսը տրուակեն
 Ցխումն թավալ տվին, տերները կորցրին:
 Նրանք էլ իրանց տլոտ ֆրակով,
 Հազար տեղ ցխին պաչ արին սիրով.
 Ուղեցան մեկ էլ քոռ հավի՛ նման
 Գլուխ վերցընեն, իրանց գլուխը լան.
 Բաղմանչիք կետով, թիով, դազանակով
 Վրա հասան՝ որ նրանց ցխոտ բահերով
 Գլխները ջարդեն, նահատակ անեն.
 Բայց մեր խալխի սիրտն կակող ըլելով,
 Նրանց եղ կանգնեցրին, վրա թափեցին,
 Փիլիսոփեքին ցխից հանեցին.
 Գլխները սրբեցին, երեսները լվացին.
 Էլ ձեն տալ նրանք հեչ կարո՞ղ էին:
 Սուս ու փուս իրանց դատերը կիտեցին,
 Ուղղում էին՝ որ քաշվին, պրծնին.
 Բայց մեր սուփրի համն՝ դուշն էլ անց կենա,
 Որ չտեսնի, մեր սրտումն շատ դարդ կմնա:
 Մեր դոչաղ տղերքն իրանց դուշմանին
 Կանչեցին, սուփրի գլխին նստացրին.

Իրանք քեֆ արին, նրանց քեֆ շհանց տվին:
Հենց հազարփեշեն ռորմեջ չըբե ին,
Մատաղ դառի պես մեր եվրոպացին
Առավ՝ մուրազով պաչեց, դրեց բերնին:

«Սո՛ւրբ հազարփեշա՝ զորությունդ շատ ա.
Մեր բալն, մեր կոնցերտն, մեր տանցն

ոչինչ ա:

Ով Կախեթու սուրբ բաժակի համն,
Ռմբու, տկճորի ու կպրի ջութամն
Զի տեսել, նա հեշ մարդի հեսարում
Զի ըլիլ քնալ բոլոր աշխարհումն:
Քնելիս, զարթնելիս՝ թե ժամ գնալիս,
Ընչանք քո համը չառնենք, չխմենք,
Թո՛ղ աստուծո մոտը սեերես մտնինք:
Մեկ միրկիտանի դուքան տեսնելիս,
Մեկ պուճախում կպրի հոտը առնելիս՝
Փող էլ չունենանք, գլխներս ծախենք,
Գլուխն մերը չըլի, սերթուկն դրավ դենք,
Մանկնք քո տաճարն, ումբիդ համբուրենք.
Շատ անգամ մոտիդ վեր ընկնինք, քնինք:
Թո՛ղ վրաստանցին քեզ կպրում ածի,
Քեզ անըվա ոտով կոխի, կիշորի.
Քեզ ճաշակելիս՝ էլ գլուխը ձեռին

Ման գա, չընմի քո քաղցր հոտով.
 Հինգ թունդի խմի, բեղերն սրելով՝
 էլի դուս գա լուրջ ու պարծենալով
 Հազար տեղ ասի. «էսօր խմեցի
 Հինգ թունդի, կուղեմ բայց խմեմ էլի.
 Ինձ համար գինին, Քոի ջուրն մեկ ա,
 Ինձ համար որ նա կրակ էլ դառնա,
 էլի չի՛ կարող մեկ խեր, կամ շառ տա.
 Հազար էլ խմեմ, էլի կորցնիլ չեմ
 Իմ ուշա ու խելքս, իմ բանս կանեմ:
 էլի տիճորը մոտիս կուեննամ,
 Քեֆ կանեմ ու իմ հոգսը կը հողամ»:

«Ձէ՛ սուրբ ուսմբի՛ սուրբ հազարփեշա,
 Ձեր համն առնողը պետք է քնած մնա:
 Հազար օր բարձից գլուխ չվերցնի,
 Ձեր էշխին, քեֆին նա մատաղ ըլի.
 Յխումն էլ ընկնի, ձնումն էլ թաղվի,
 էլի ձեր էշխը, ձեր սերն ու հրաշքը
 Միտքը բերելիս՝ երազով ընկնի,
 Գնա երկինքը, երկիրը եղ գա:
 Ձեր արևի ձենն ամի ու խնդա:
 Օրթում էլ ուտի, ձեր գլխովն երդվի,
 Դեռ հաց չկերած, ձեր անունն հիշի,

Ձեր փորը ածի, որ բանն հաջողի՞:
 Էս ա, որ հմիկ մեր ամեն բանը
 Փոխվել ա, ամա մեր գինու ջանը
 Դեռ կպրում մնում, զոռը բանացնում.
 Որ հաղարփեշա, ու տկճոր, կուլա
 էլի մնացել են էնպես միշտ թաղա:
 Ով ասես՝ մեզ միշտ հարբա է գալիս,
 Մեր ոմբու ձենը հենց իմանալիս,
 Բարեկամ դառնում, մեզ ախպեր ըլում,
 Մեզ պատիվ տալիս, մեզ քոմակ անում:
 Ասացեք տղերք՝ դուք ալլահվերդի,
 Յաղզի՛ օլ, ուռա՛, կամ զղրավի.
 Բոն ժուրն, գուտն տաղն բանի պետքը չի-
 Աստված՝ օր, արե ոմբու շինողին,
 Աստված մեր հաղարփեշի սարքողին
 Մինը հաղար անի, գերեղմանն օրհնի:
 Նրա մեռած հողին միշտ լուսավորի.
 Ու մեզ էլ պահի, որ մեր Կախեթու
 Բաժակի զաղրը միշտ իմանանք, ու
 Միշտ հաղար բերնով, ու հաղար ձեռով
 Հաղարփեշեն բռնած՝ հաղար օր ասենք.
 Աստված Կախեթը շեն պահի, հաստատ.
 Նա է մեզ տալիս ուրախ սիրտ, զվաթ:

Աստված նրա բունյաթն միշտ հազար տարի
Հայիմ, դադըմի անպակաս անի:
Հազար ձեռով մեղ հազար փորձանքից,
Հազար շառից, շուռից մեղ ազատ պահի:
Տղերք՝ ձեր մինը միշտ հազար ըլի.
Ուտենք, քեֆ անենք, հո հազար տարի
Մենք չենք ասլըելու — էս փուչ աշխարքումն.
Սաղ ըլիք, ուրախ՝ հավասարական.
Մեր մեռած ու սաղ ըմբռով կշտանան:

ХАЧАТУР АБОВЯН

ЧАРКА

(на армянском языке)

Армгиз, Ереван


1941

Պատ. Խմբագիր՝
Ս. Ա. Մ ի ֆ ա յ ե լ յ ա ճ

ՎՖ 7282 Պատվեր 489. Տիրած 4000.

Ստորագրված է տպագրության 4/VII 41 թ.


Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040909



1
5062